ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.12.2021թ. թիվ 2113917478 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<28>> 12 2021թ. 7-13- 19666 ք. Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով Գայանե Մարտիրոսյանի ՄԴ/103032-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Քաղաքացի Գայանե Մարտիրոսյանը (**ծանուցման հասցե՝** քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջան, Էրեբունի փողոց, 20-րդ շենք, 19-րդ բնակարան) դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113917478 որոշումը՝ նշելով որ չի խոչընդոտել երթևեկության այլ մասնակիցներին:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական ակտը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 84-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ կանգառն արգելվում է խաչմերուկներում, երթևեկելի մասերի հատման վրա և հատվող երթևեկելի մասի եզրից 5 մ պակաս վայրում՝ բացառությամբ երթևեկելի մասերի եռակողմ հատման հոծ գծով կամ բաժանարար գոտիով առանձնացված կողմի վրա (շարունակություն չունեցող կողմի դիմաց):

<<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> օրենքի 2-րդ հոդվածի հիմնական հասկացության համաձայն՝ երթևեկելի մասը ճանապարհի տարր է՝ նախատեսված ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների երթևեկության համար:

Նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<NISSAN>> մակնիշի 10ZG011 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը 25.11.2021թ. ժամը 13:40:46-րդ վայրկյանից 13:41:58-րդ վայրկյանը՝ 72 վայրկյան տևողությամբ տեղակայված է եղել Երևան քաղաքի Բաղրամյան փողոցի հատվածում՝ երթևեկելի մասերի հատման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված

նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր: Նույն հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի հատկանիշները, հետևաբար նրան վարչական տույժ նշանակելու մասին որոշումն օրինական է և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 09.12.2021թ. թիվ 2113917478 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Գայանե Մարտիրոսյանին:

Ե. Կարապետյան

Կատարող՝ Կ. Ահարոնյան
Հեռ. 011-54-47-83